ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 44-Ա

<<28>> հունիսի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀՐԱՏԱՊ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներով, կարևորելով համայքում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ հրատապ լուծում պահանջող պետական ծրագրի շրջանակներում Անի համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սույն որոշման հավելվածում նշված ծրագրերն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարիբեկյանին

Դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ սույն որոշման հավելվածում նախատեսված ծրագրերը հրատապ լուծում պահանջող պետական ծրագրում ընդգրկելու համար:

3. Հաշվի առնելով սույն որոշման հավելվածում ներառված ծրագրերի իրականացման հրատապությունը, տալ համաձայնություն՝ ծրագրերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի գնման գործընթացը, հրատապության հիմքով, իրականացնել մեկ անձից գնում կատարելու միջոցով:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<28>> հունիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2023 թվականի
հունիսի 28-ի թիվ 44-Ա որոշման

ՀՐԱՏԱՊ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

	Ծրագրի անվանումը	**Հիմնանորգման ենթակա փողոցների երկարությունը /մակերեսը/, կառուցվող մանկապարտեզի հզորությունը**	**Կարիքի հիմնավորում**
1.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի կենտրոնական հրապարկի հիմնանորոգում	7200 քառ. մ.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի կենտրոնական հրապարկը գտնվում է քայքայված և անբարեկարգ վիճակում
2.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հաղթանակի փողոցի հիմնանորոգում	440 գծ. մ. /4500 քառ. մ/	Անի համայնքի Մարալիկ քաղաքի քաղաքային պուրակի հարևանությամբ գտնվող Հաղթանակի փողոցը գտնվում է քայքայված և անբարեկարգ վիճակում
3.	Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր Թադևոսյանի անվան փողոցի հիմնանորոգում	360 գծ. մ. /3845 քառ. մ/	Անի համայնքի Մարալիկ քաղաքի Արկադի Տեր-Թադևոսյանի անվան փողոցը գտնվում է քայքայված և անբարեկարգ վիճակում
4.	Անի համայնքի Մարալիկ քաղաքում մոդուլային տիպի մանկապարտեզի կառուցում	120 տեղ	Մարալիկ քաղաքի 0-6 տարեկան երեխաների թիվը կազմում է 498, որից համայնքային ենթակայության միակ մանկապարտեզ են հաճախում միայն 120-ը: Համայնքի 0-6 տարեկան 338 երեխա զրկված են նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունից: Նոր մանկապարտեզի կառուցման համար քաղաքի կենտրոնական մասում նախատեսված է 1500 քառ, մետր մակերեսով հողամաս: Անհրաժեշտ է կառուցել 120 տեղ հզորության մոդուլային տիպի մանկապարտեզ:

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**